

ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

أزتاك جريدة يومية سياسية وأدبية - البيرة السؤلة - إيشادروشيان

1500 L.Ո. 76ԻԳ-ՏԱՐԻ, ԹԻԻ 194 (21536) ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003 10 ԷՁ

ԼԵՈՆԱՅԵԼ ՂԱՐԱՔԱԳԻ ՏԱԳՆԱԳԻ ԼՈՒՃՄԱՆ ԳՃՈՎ

ԱԼԻԵԻ ՄԻԱԿ ՀԱՍՑԵՆ՝ ԱՆԳԱՐԱՆ

Արաբականի նախագահ Իսիամ Ալիեի հետ ընդունված է Թուրքիոյ ցամաքային ուժերու հրամանատար Այթաք Եայմանը: Հանդիպման ետք կայացած մամլոյ ասուլիսին ընթացքին Ալիեի անդրադարձած է Լեռնային Ղարաբաղի հիւղիսին:

Ի. Ալիեի յայտարարեց, թէ Արաբականի բանակին մէջ Թուրքիոյ արակցութեամբ իրականացուող բարեփոխումները կրնան կարեւոր դեր խաղալ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման մէջ: Անոր կարծիքով, թէ՛ երկկողմանի, թէ՛ ԵԱՀԿի Մինսքի խմբակի ժողովին ներքին կատարուող բանակցութիւնները արդիւնք չեն տար եւ պէտք է նոր ուղիներ որոնել: Արաբականի նախագահին համաձայն, ԵԱՀԿի Մինսքի խմբակի առաքելութեան ծախողութիւնը կը փաստէ, որ ժամանակը հասունցած է տագնապը ինքնուրոյն ձեւով լուծելու՝ փնտրական տարբերակով:

Իր կարգին, թուրք բարձրաստիճան փնտրականը շեշտած է, որ իրենք եւս շահագրգռուած են Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծմանը եւ այդ հարցին մէջ կ'աջակցին Պարսի:

ՆԱԽԱԳԱՇ ՊԱՇՇԱՐ ԱՍԱՏ ԸՆԴՈՒՆԵՑ ՆԵՊԻՇ ՊԵՐՐԻԻ ԳԼԽԱԲՈՐԱԾ ԽՈՐՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պերրիի գլխաւորութեամբ, խորհրդարանական պատուիրակութիւն մը այցելեց Գամասկոս, ուր ընդունեցաւ Սուրիոյ նախագահ Պաշար Ասատի կողմէ:

Ըստ Պերրիի, լիբանանեան այս պաշտօնական այցելութիւնը Գամասկոս ուղղակի եւ գործնական պատասխան է ամերիկեան Քոնկրէսին կողմէ Սուրիան հաշուետուութեան կանչելու օրինագիծին, ինչպէս նաեւ սուրիական ուժերը Լիբանանէն հեռացնելու ամերիկեան պահանջին:

Պերրի շեշտեց, որ յստակ կեցուածք ճշդուած է լիբանանեան սուրիական երկկողմանի յարաբերութիւններուն միջամտել փորձող տարբերուն դէմ:

Պերրի վերահաստատեց, որ Լիբանանի մէջ սուրիական ուժերու ներկայութիւնը Լիբանանի համաձայնութեամբ է եւ ուղղակիօրէն կ'առընչուի Իսրայէլի սպառնալիքներուն:

Պերրի այս կեցուածքները յայտարարեց Սուրիոյ Ազգային ժողովին մէջ, արտակարգ նիստի մը ընթացքին:

Սուրիոյ պաշտօն ժողովի նախագահ Մահմուտ Ապրազ ողջունեց լիբանանցի իր պաշտօնակիցը եւ ըսաւ, թէ արաբ ազգը կը դիմագրաւէ դժուար ժամանակաշրջան մը եւ աւելցուց, որ երբ Սուրիա չի հակադարձեր, այդ մէկը իր տկարութեան հետեւանքը չէ, այլ՝ կը բխի յստակ որոշումներէ ու կեցուածքներէ:

Ապրազ աւելցուց, որ աշխարհի ամենախոյս փետրութիւնը միայն մէկ թիրախ չունի, այլ՝ թիրախ դարձուցած է բոլոր արաբները եւ իսլամները, պատուակելով Լիբանանի իսլամական դէմ պայքարը:

Ապրազ ընդգծեց, որ Իսրայէլ իր հիմնադրութեան օրէն իսկ ահաբեկչութիւն կը կատարէ, կը պահէ իր արգիլուած վէճերը եւ կը սպառնայ շրջանին եւ միջազգային պաշտօնութեան ու կայունութեան:

Ապա Ապրազ հարց տուաւ, թէ արդե՞ք արգիլուած է արաբներուն՝ պահանջելու իրենց հողերն ու իրաւունքները:

Ազգային ժողովին մէջ կատարուած այս յայտարարութիւններէն ետք, լիբանանեան պատուիրակութիւնը, որուն մաս կը կազմէր նաեւ խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆըրլի, ներկայութեամբ լիբանանեան սուրիական գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար Նասրի Սուրիի, Խորհրդաբեց համաձայնագիր մը, որ կ'ընդգրկէ ընդարձակ գործակցութիւն՝ պանապան մարպերու մէջ, աւելի եւս սմարպիւրելու Պէլլուրթ - Գամասկոս երկկողմանի յարաբերութիւնները:


ՄԻՆՁ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒՆ ԵՒ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐՆԵՐՈՒ ԴԵՄ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ ԱՆԸՆԴՄԷՋ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

ՊՈՒՇ ԿԸ ՎՍՏԱՀԵՑՆԷ, ԹԷ ԻՐԱՔԻ ՄԷՋ ՇՕՇԱՓԵԼԻ ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԻՒՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄԸ Է...

Մինչ իրաքի մէջ ամերիկացի զինուորներու եւ բարձրաստիճան պաշտօնատարներու դէմ յարձակումները կը շարունակուին, Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ կը յայտարարէր, թէ յաջողած է միջազգային օժանդակութիւն ապահովել իրաքի կայունացման մէջ վերականգնման համար: Պուշ վստահեցուց նաեւ, որ շուտօրէն յառաջդիմութիւն արձանագրուած է երկիրին մէջ:

Պուշ, որ կը խօսէր Մատրիտի խորհրդաժողովին առիթով, ըսաւ որ միջազգային գորակցութիւնը առիթ պիտի ընծայէ իսկապէս վերականգնելու իրաքը: Պուշ աւելցուց, որ դաշնակից ճակատը վերականգնման յայնածիր աշխատանքի մը ձեռնարկած է՝ վերանորոգելով դպրոցները, հիւանդանոցները եւ երկրորդային գործարանները: Ան ըսաւ նաեւ, որ շուտով իրաք պիտի ունենայ իր սահմանադրութիւնը, որուն պիտի յարձուրդեն ազատ ընտրութիւնները:

Սպիտակ Տունը լրատուական ցանցերու ընդմէջէն քարոզական արշաւի մը ձեռնարկած է, համոզելու համար ամերիկեան հանրային կարծիքը, որ իրաքի մէջ կացութիւնը կը բարելաւուի եւ թէ հակամարտութիւնը կարգապէս կը խեղդուի:



Վոյժովիցի իջեւանած պանդոկից հարուածուած մէկ սեղանը

ուսկը հաղորդող լրատուութիւնը պարզապէս կը խեղդութիւնը իրականութիւնը:

Պուշի եւ Սպիտակ Տան ճիգերը չյաջողեցան արգիլել ընդդէմ ցոյցերը, որոնք Շարաթ օր տեղի ունեցան ամերիկեան քաղաքներու մէջ՝ պահանջելով ամերիկացի զինուորներուն տունդարձը «ստախոս» հռչակելով ամերիկացի նախագահը:

Աւելի քան 20 հազար ձախակողմեաններ քաղցին մայրաքաղաք Ուսալի կենտրոնի մէջ: Անոնց դէմ ելաւ պատերազմը պաշտպանող փոքր խումր մը: Ան Ֆրանսիսքոյի մէջ ցոյցի մասնակցեցան աւելի քան 4 հազար ամերիկացիներ, որոնք կը պահանջէին վերջ տալ իրաքի գրաւման: Նման ցոյցեր տեղի ունեցան նաեւ քանի

գործնական ծրագիրներու վերածել:

ՂԱՃՆԱԿԻՑ ՈՒՇԵՐՈՒՆ ԴԵՄ ՆՈՐ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ

Ամերիկացի զինուոր մը սպաննուեցաւ եւ 15 հոգի վիրաւորուեցաւ, երբ արձակուեցան Պաղատաի պանդոկներէն մէկուն վրայ, ուր կը գտնուէր Միացեալ Նահանգներու պաշտպանութեան փոխ նախարար Փոլ Վոյժովից:

Զինուորական բանբեր մը հաստատեց, որ ամերիկացի զինուոր մը սպաննուած է, չորս զինուորներ ալ վիրաւորուած են: Միացեալ վիրաւորները օտար քաղաքայիններ են:

Վոյժովից, որ ենթադրաբար յարձակումի թիրախն էր, սպաննուեցաւ եկաւ պանդոկէն, յայտարարելով, որ այս արարքը յուսահատ փորձեցնել է մահաձեռք վարչակարգի մը ոճրագործներուն: Ամերիկացի զինուորականներ յայտնեցին, որ Ռաշիտ պանդոկին դէմ յարձակումին գործածուած են 29 հրթիռներ: Անոնք աւելցուցին, որ հրթիռները արձակողները յաջողած են 400 մեթր հեռանոցէ, հետեւաբար անընդամենը կացութիւնը հարձակուողները սպանուակ անոր որ պանդոկը ապահովուեց:

Վոյժովից, որ ենթադրաբար յարձակումի թիրախն էր, սպաննուեցաւ եկաւ պանդոկէն, յայտարարելով, որ այս արարքը յուսահատ փորձեցնել է մահաձեռք վարչակարգի մը ոճրագործներուն: Ամերիկացի զինուորականներ յայտնեցին, որ Ռաշիտ պանդոկին դէմ յարձակումին գործածուած են 29 հրթիռներ: Անոնք աւելցուցին, որ հրթիռները արձակողները յաջողած են 400 մեթր հեռանոցէ, հետեւաբար անընդամենը կացութիւնը հարձակուողները սպանուակ անոր որ պանդոկը ապահովուեց:

Վոյժովից, որ ենթադրաբար յարձակումի թիրախն էր, սպաննուեցաւ եկաւ պանդոկէն, յայտարարելով, որ այս արարքը յուսահատ փորձեցնել է մահաձեռք վարչակարգի մը ոճրագործներուն: Ամերիկացի զինուորականներ յայտնեցին, որ Ռաշիտ պանդոկին դէմ յարձակումին գործածուած են 29 հրթիռներ: Անոնք աւելցուցին, որ հրթիռները արձակողները յաջողած են 400 մեթր հեռանոցէ, հետեւաբար անընդամենը կացութիւնը հարձակուողները սպանուակ անոր որ պանդոկը ապահովուեց:

Շար.ը՝ էջ 2

ԹՈՒՐԻՔԻԱ ԼՐՏԵՍԱԾ Է ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ

ԺԼՆԵԻ, 26 (ԱՅՓ).- Թրքական գաղտնի սպասարկութիւնները լրտեսած են Զուլիջերիոյ արտաքին գործոց նախարար Միլիշին Քալմի-Ռէյլը՝ քիւրտ փոքրամասնութեան հետ անոր ունեցած ենթադրեալ կապերուն պատճառով, հաղորդած են զուլիջերիական թերթեր կիրակի օր:

Այս պատճառով նախարարը անցեալ ամիս Անգարա իր այցելութիւնը ջնջած է: «Լը Մաթէն» թերթը հաղորդած է, որ թրքական գաղտնի սպասարկութիւնները ենթադրեալ կապին գծով զուլիջերիական ոստիկանութիւնը տեղեակ պահած են:

Անիկա մէջբերած է թրքական գրութիւն մը, որ ըսած է. «Զեր արտաքին գործոց նախարարը Անգարայի մէջ անբաղձալի տարր է, որովհետեւ անիկա շատ մեծ ուշադրութիւն կը դարձնէ քիւրտ ընդդիմադիրներուն»: Երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւնները վատթարացած են անցեալ ամիս երբ արտաքին գործոց նախարարին այցելութիւնը ջնջուած է մետասաներորդ վայրկեանին:

Թրքական կառավարութիւնը յստակ դարձուցած էր, թէ «վիրաւորուած է» որովհետեւ զուլիջերիական ՎօՔանթոնը հրապարակաւ ճանչցած էր 1915ի Հայկական Յեղապանութիւնը:

Զուլիջերիական թերթերու տեղեկագիրներուն համաձայն, թրքական գաղտնի սպասարկութեանց գրութիւնը փոխանցուած է Զուլիջերիոյ նախագահ Փասքալ Քուշլիֆէնի, որ կառավարութեան արտակարգ ժողով մը պահանջած է զժողովութիւն արտայայտելու համար արտաքին գործոց նախարարին:

Ըստ «Լը Մաթէն»ի, Քալմի-Ռէյլ Օզոստուսին թուրք գործակալի մը կողմէ հսկողութեան տակ պահուած է: Այս վերջին նախարարը տեսած է հաւաքովի մը, որուն ընթացքին ան խօսած է քիւրտ ընդդիմադիրի մը հետ: Զուլիջերիոյ ընդհանուր դատախազին մէջ բանբերը տեղեկագիրները «անհաւատարմ» նկատած է:

Եթէ թրքական լրտեսութեան որեւէ փաստ ըլլայ, քննութիւն մը պէտք է բացուի զուլիջերիական հողամասերու վրայ օտար գաղտնի սպասարկութեանց ապօրինի գործունէութեանց մասին, ըսած է ան:

Հ. Յ. Գ. «ԴՐՕ» ԿՈՄԻՏԵՆԻԹԵԱՆ ՆԱԽԱՋԵՌՆՈՒԹԵԱՄԲ ՎԱՐԴԱՆ ԸԱՀՊԱՋԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԵՑԱԻ ՆՈՐ ԸԻՐՄԱՔԱՐՈՎՄԸ

Իր համակ կեանքը յանուն հայրենիքի եւ գաղափարի ընծայութեամբ դաշնակցական մարտիկ Վարդան Շահպազի յիշատակը հանդիսաւորապէս ոգեկոչուեցաւ եւ անոր վաստակին յարգանքի տուրք մատուցուեցաւ Կիրակի, 26 Հոկտեմբերին առաւօտեան ժամը 10:30ին, Ֆրն Շրպազի ազգային գերեզմանատան մէջ, ուր Արագածի Հ. Յ. Գ. «Դրօ» կոմիտէի թիւերը կազմակերպած էր անոր շիրմաքարին բացման հանդիսութիւնը:



Պատմականութեամբ քահանայ հայրերը եւ ներկաները ուղղուեցան դէպի Վարդան Շահպազի շիրմաքարը, ուր տեղի ունեցաւ անոր գերեզմանին եւ տապանաքարին օրհնութիւնը: Ապա Հ. Յ. Գ. Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Յովիկ Մխիթարեան, Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարրիբեան, Այնճարի քաղաքապետ Սեպուհ Սպայեան, ինչպէս նաեւ մեծ թիւով կուսակցական ընկերներ եւ համակիրներ: Յետ շայտատանի քայլերի ունկնդրութեան, մարտան մէջ կատարուեցան հոգեհանգստեան հանդիսաւոր արարողութիւն, որմէ ետք Հ.Մ.Ը.Մ. Ի սկստանքներն

բացուած: «Դրօ» կոմիտէի թիւերը անուումի խօսք առաւ ընկ. Վիգէն Աւագեան, որ լուսարձակի տակ առաւ իր ժողովուրդին սրբազան գատին նուիրուած անձնուորացի հայրուկին կեանքն ու գործը, որոնք գրեթէ անշուք մնացած են, որովհետեւ Վարդան Շահպազ մասնակցելով հայ ազատագրական պայքարի գրեթէ բոլոր մեծ ձեռնարկներուն, «մնա- Շար.ը՝ էջ 10

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԱՅՅԵԼԵՑ ՊԱՐՈՒՔ

Նախագահ զոր. Էմիլ Լահուտ երկկ կէսօրէ առաջ այցելեց տիրազի համայնքի հոգեւոր պետ շէյխ Ապու Հասան Արէֆի Հալաուայի, որուն ապաքինում մաղթեց վերջերս անոր ունեցած առողջական հարցերէն ետք: Նախագահ Լահուտի ընկերակցեցան նախարարներ Մարւան Համատէ եւ Ղազի Արիտի:

Պարուրէ մէջ, նախագահ Լահուտ քննարկեց երկրին ընդհանուր հարցերը, ինչպէս նաեւ ներկայ իրադարձութիւնները:

Միւս կողմէ, նախագահ Լահուտ հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ նաեւ Լիբանանի հանրապետութեան միւլթի շէյխ Մահմէտ Ռաշիտ Քապպանիի եւ շիինքու գերագոյն խորհուրդի փոխ նախագահ շէյխ Ապուլ Էմիր Քապպանիի հետ: Նախագահ Լահուտ շնորհակալեց անոնց ռամատանի սուրբ տօնը մաղթելով, որ ռամատանի ամիսը լիբանանցիներուն ընդհանրապէս եւ իսլամներուն յատկապէս կը բերէ բարութիւն եւ խաղաղութիւն:

ՖԵՐԶԼԻ Կ'ԱՆԴՐԱԴԱՌՆԱՅ ՆԵՐԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊՆԵՐՈՒՄ

Խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆերզլի երկկ յայտնեց, որ 2004ի պետական պիտուէի նախագիծի շուրջ երկխօսութիւններն ու տարակարծութիւնները կը կապուեն երկրին ողբերգական երեւոյթներէն մէկը, ինչպէս նաեւ իշխանութեան տիրանալու պայքարներէն ամէնէն յոռի երեւոյթներէն մէկը:

Ֆերզլի շեշտեց, որ երկրին իշխանութիւնը կ'ապրի ոչ սահմանադրական մթնոլորտի մէջ, իսկ իշխանութեան երեք պետերը կ'որդեգրեն ղեկավարութեան այնպիսի մեթոտներ, որոնք երկիրը կը մղեն սահմանադրութենէն անդին:

«Միւս կողմէ, խորհրդարանը սահմանադրութեան տէր կանգնելու իր պարտականութեան մէջ կը թերանայ», ըսաւ ան: Ֆերզլի նշեալ յայտարարութիւնները կատարեց քուէյթեան «Ռայ Ամ» օրաթերթին հետ ունեցած հարցազրույցի ընթացքին:

Ֆերզլի ընդգծեց նաեւ, որ Դամասկոս Լիբանանի ներքին կենսաքին միջամտածէ կասեցնելու համար քաղաքացիական պատերազմը:

Ֆերզլի աւելցուց, որ փոփոխութիւններու արշար պիտի սկսի Լիբանանի մէջ գործադրուի յառաջիկայ երեսփոխանական ընտրութիւններուն՝ 2005ին:

Ֆերզլի իր խօսքին մէջ աւելցուց նաեւ, որ վերոնշեալ բարեփոխումներուն հիմնական զօրակիցը պիտի ըլլայ Սուրիոյ նախագահ Պաշշար Ասադ:

ՔԱՐԱՄԷ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԷ ՊԻՏՏՃԷԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Նախկին վարչապետ Օմար Քարամէ երկկան իր յայտարարութիւններուն մէջ նկատել տուաւ, որ 2004ի պետական պիտուէի նախագիծը ոչ մէկ բարեփոխում կ'առաջարկէ:

Ան շեշտեց, որ իսկական փրկութիւնը կ'ըլլայ գործով եւ խստի դատապարտեց բոլոր այն կողմերը, որոնք ժողովուրդը կը վաղեցնեն նախագիծով առանց լրջօրէն անդրադարձնալու ժողովուրդին իսկական կարիքներուն:

Քարամէ յայտնեց նաեւ, որ երկրին ղեկավարութեան կողմէ սահմանադրութիւնը եւ օրէնքները օրական դրութեամբ «կը բռնաբարուին», ինչպէս նաեւ պետական հաստատութիւններն ու հսկողութիւնը կը բացակային, որոնց իբրեւ արդիւնք երկրին նիւթական բացը յաւելում կ'արձանագրէ:

Անդրադառնալով միջազգային իրադարձութիւններուն Քարամէ ընդգծեց, որ շրջանային վարագումները կը ծառայեն Իսրայէլի շահերուն, դիտել տալով, որ Սուրիան հաւանաբար միակ երկիրն է, որ դէմ կը դնէ այս երեւոյթին եւ ճիշդ այդ պատճառով այ կ'ենթարկուի ճնշումի՝ հաշուետուութեան կանչուելու օրինագիծով: Ան աւելցուց, որ ամբողջ արաբ ազգը կը զօրակցի Սուրիոյ եւ կ'ուզէ պաշտպանել զայն, որպէսզի ինքզինք եւ իր իսկ արժանապատուութիւնը պաշտպանէ:

Նշեալ յայտարարութիւնները Քարամէ կատարեց Վիւն Քարագետաւորութիւնը նուիրուած յատուկ ձեռնարկի մը ընթացքին, Թրիփոլի մէջ:

ԳԵՐԻՆԵՐՈՒ ՓՈՒՍԱՆԱԿՈՒՄԻ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՍԱԾ Է ԱՆԱՐՏԱԿԱՆ ՓՈՒԼ

«Հաւատարմութիւն Դիմադրութեան» երեսփոխանական պրոքի նախագահ Մահմէտ Ռաշիտ երկկ ձայնասփիւռի «Լիբանանի Ձայն» կայանին հետ կատարած յատուկ հարցազրույցի մը ընթացքին շեշտեց, որ Իսրայէլի հետ գերինքու փոխանակման բանակցութիւնները գրեթէ աւարտական ընթացքին հասած են:

Ան յոյս յայտնեց, որ գերինքու ազատ արձակումը ըլլայ ամբողջութեամբ երկու կողմերուն համար ալ եւ ամէնէն մօտ ժամանակաշրջանին:

ՊՈՒՇ ԿԸ ՎՍՏԱՀԵՑՆԷ, ԹԷ ԻՐԱՔԻ ՄԷՋ...

Շարունակուած Ա. Էջեմ

Թեան խիստ միջոցառումներով գօտիի մը մէջ կը գտնուի: Վոլֆովիցի դէմ անուղղակի կերպով այլ միջադէպ մըն ալ արձանագրուած էր Շարաթ օր, երբ ան Թիբրիթ այցելեց: Այցելուութեան ընթացքին եւ Վոլֆովիցի գտնուած վայրին մօտ, ԱՌ. Փ. Ճ. Ի. տիպի հրթիռ մը հարուածեց ամերիկեան զինուորական ուղղակի մը: Վիրաւորուեցաւ ամերիկացի զինուոր մը:

Ամերիկացի վեց զինուորներ վիրաւորուեցան Շարաթ օր Պաքուպայի շրջանին մէջ տեղի ունեցած երկու միջադէպերու ընթացքին: Իսկ Պաղատի արեւմուտքը վիրաւորուեցան այլ երկու զինուորներ:

(ԱՅՓ)

ՄԱՀԱԶԴ

Տիար Միքայէլ Պաղատասարեան եւ զաւակը՝ Էտի Տէր եւ տիկին Գարուստ Մարկանեան եւ զաւակուը Տիկին Սոնա Մարաֆեան եւ զաւակուը Տիկին Ռիթա Պետրոսեան եւ զաւակուը Պր. Զոհրապ Տատուրեան Օր. Լենա Քիրքեան Տիկին Անի Քոբիլեան եւ զաւակուը Տէր եւ տիկին Պետրոս Սէֆրեան եւ զաւակուը եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, մօրաքրոջ եւ հարազատին՝

ԷՕԺԷՆԻ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ (ԾԳԵԱՂ՝ 1914ԻԳ)

մահը, որ պատահեցաւ Շարաթ, 25 Հոկտեմբեր 2003ին առաւօտեան ժամը 9:00ին, յետ կարճատեւ հիւանդութեան: Յուղարկուողութեան արարողութիւնը կատարուեցաւ Շարաթ, 25 Հոկտեմբեր 2003ին, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Ֆրըն Շըպպէի Ազգային գերեզմանատան մատրան մէջ: ●Ներկայս ընդունելի իբրեւ մահազգ:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Ռոզա Բննիկեան Տէր եւ տիկին Յովհաննէս Բննիկեան եւ զաւակուը Տէր եւ տիկին Գրիգոր Բննիկեան եւ զաւակուը Տէր եւ տիկին Կարապետ Թօփալեան եւ զաւակուը Տէր եւ տիկին Ճօ Մէնէշեան եւ զաւակուը Տիկին Թրֆանտա Չափուրեան եւ զաւակուը Տիկին Մարի Սիւլեան եւ զաւակուը Թոքեան ընտանիք Թօփալեան ընտանիք Օսմանեան ընտանիք Օզնալեան ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր եւ հարազատին՝

ՍԱՐԳԻՍ ԲՆՆԻԿԵԱՆԻ (ԾԳԵԱՂ՝ 2աճՂԳ, 1909ԻԳ)

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 26 Հոկտեմբեր 2003ին, իր ընկալարանին մէջ: Յուղարկուողութեան արարողութիւնը պիտի կատարուի երկուշաբթի, 27 Հոկտեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Նոր Հաճնոյ Ս. Գէորգ եկեղեցու մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը: ●Ներկայս ընդունելի իբրեւ մահազգ: ●Ցաւակցութիւնները կ'ընդունուին հաճուցեալին բնակարանին մէջ, Թիքո թաղ, ԲԳՆԻԿԵԱՆ ԶԵՆՔ, Երկուշաբթի 27, Երեքշաբթի 28 եւ Չորեքշաբթի 29 Հոկտեմբերին:

ՀԸՄԱՅԷՏ ԼՍԻԱՏԵՍ ՉԷ ՆԻԻԹԱԿԱՆ ԲԱՅԻՆ ԳԾՈՎ

Հարաւի մէջ, ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Այուպ Հրմայէտ երկկ նկատել տուաւ, որ ժողովուրդին բերք բաւական ծանր է, որովհետեւ կը գերազանց անոնց աշխատաւորական, սենտիքայական եւ օրական հոգերը:

Նապաթիէի մէջ տեղի ունեցած հանդիսութեան մը ընթացքին Հրմայէտ յայտնեց, որ երկիրը կը դիմագրաւէ «վերելք» արձանագրող նիւթական բաց մը:

ԱՖՀԻԼ - ՍԷՆ ՄԱՐՔ - ԱՖՀԻԼ - ՍԷՆ ՄԱՐՔ

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ, ԳՈՐԾԱԿՑԱԲԱՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՀԵՏ, ԴԻՄԱԾ Է ԿՈՒՐԾՔԻ ՔԱՂՑԿԵՂԻ ԴԷՄ ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ԱՐՇԱԻՒ ՄԸ ՀՈԿՏ. - ՆՈՅԵՄ. ԱՄԻՍՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԻՆ

ԱՅՍ ԱՌԹԻԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ, ԼԻԲԱՆԱՆԻ ԱՄԲՈՂՋ ՏԱՐԱԾՔԻՆ ՎՐԱՅ ԸՆՏՐԱԾ Է ԿԱՐԳ ՄԸ ՀԻՒԱՆԴԱՆՈՑՆԵՐ ԵՒ ՄԻԱՅՆ

ՍԷՆ ՄԱՐՔԸ ԻԲՐԵԻ ԱԽՏԱՃԱՆԱԶՄԱՆ ԿԵԴՐՈՆ

ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿՈՒՐԾՔԵՐՈՒ MAMMOGRAPHY-ECHORGRAPHY ՆԿԱՐԸ

ՍԱԿԸ ՈՐՈՇՈՒԱԾ Է 35.000 Լ.Ո. ՄԻԱՅՆ ՕԳՏՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՅՍ ԲԱՑԱՌԻԿ ԱՌԹԷՆ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԴԻՄԵԼ ՈՒՂՂԱԿԻ

ԱՖՀԻԼ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՀԵՌ. 01/242556-7 ԿԱՍ ՍԷՆ ՄԱՐՔ ԺԷԹԱՌԻԵ ԵՒ ՉԱԼՔԱ ԿԵԴՐՈՆՆԵՐ ՀԵՌ. ԺԷԹԱՌԻԵ - 01-566633 - 01-576565 - 03-217297 ՉԱԼՔԱ - 01-885829 - 01-891464 - 03-503603

ԱՖՀԻԼ - ՍԷՆ ՄԱՐՔ - ԱՖՀԻԼ - ՍԷՆ ՄԱՐՔ

ԳԻՄՐԻԵՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԿԸ ԳՏՆՈՒԻ ԼԻԲԱՆԱՆ

Ներկայիս Լիբանան կը գտնուի Գիւմրիէն ծանանած պատուիրակութիւն մը, որուն մաս կը կապուեն Շիրակի մարզպետ՝ Երեսփոխան Պորիս Ալեքսանով, վանաձորի երեսփոխան-քաղաքապետ Նորիկ Սարգսեան, Գիւմրիի քաղաքապետարանի վարչական պատասխանատու Արդիւն Մալմանեան, քաղաքաշինութեան նախարարութեան ճարտարապետական բաժնի պետ Ճէմա Աւետիսեան, տնտեսական նախարարութեան մէջ ենթակառոյցի վարագուման պետ Հակ Միրզայեան, Պետրոս Աւագեան, Աշոտ Միրզայեան, Ովսաննա Եկոյեան եւ Արամ Խաչատրեան:

Պատուիրակութեան պիտի փոխանցուի ծանօթութիւններ՝ քաղաքներու վերակառուցման եւ վարագուման եղանակներուն ու միջոցներուն մասին, CSP իրաւանեան ընկերութեան նախաձեռնութեամբ եւ տեղւոյն մասնագէտներու աջակցութեամբ:

Մարաքաղաքին նորակառոյց կեդրոնին օրինակը առիթը տուաւ սերտելու նախապատերազմեան քանդուած Պէյրութի կորիպին վերակառուցման յատուկ պայմանները, բնոյթը եւ հետեւանքները:

Այսօր, «Մարիոթ» պանդոկին մէջ, պատուիրակութիւնը պիտի վեկուցէ Գիւմրիի անցեալին եւ յետերկրաշարժի աղետի գօտիի մասին:

Երեքշաբթի տեղի պիտի ունենայ հանդիպում Հայձարի մասնագէտներուն հետ, որուն ընթացքին մասնագէտները միասնաբար պիտի արծարծեն Գիւմրիի վերակառուցման եւ վերարժեւորման հարցերը: Հինգշաբթի անոնք պիտի տեսակցին կարգ մը պետական եւ տեղական պաշտօնական մարմիններու հետ, ինչպէս նաեւ Պէյրութի եւ Պ. Համուտի քաղաքապետներուն հետ:

Սեմինարը վերջ կը գտնէ «Մարիոթ»ի մէջ, Հինգշաբթի, փակման հանդիսութեամբ մը, որուն հրաւիրուած են քաղաքական եւ հոգեւոր պետեր:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ԿԱՐԿԱԶ

Մանկական, պատանեկան եւ երեք - պատանեկան երգչախումբ

Գեղարուեստական ղեկավար եւ խմբավար՝ **ԶԱՔԱՐ ՔԷՇԻՇԵԱՆ**

ՓՈՐՁԵՐՈՒ ԿԵՐԱԿՍՈՒՄ

Մանկական խումբ՝ Ա.ԷՄ Գ. դասարանի աշակերտներ

Ամեն Զարթ, կեսօրէ ետք ժամը 2:00էն 3:00 - Պատանեկան խումբ՝ 4էն 8ը դասարանի աշակերտներ

Ամեն Ուրբաթ, կեսօրէ ետք ժամը 4:00էն 6:00 եւ Զարթ, կեսօրէ առաջ ժամը 10:00էն 12:00 - Երեք պատանեկան խումբ՝ 9ըդէն բարձր դասարանի աշակերտներ

Ամեն Ուրբաթ, երեկոյեան ժամը 6:00էն 8:00 Փորձերը տեղի կ'ունենան Լեւոն Զամբ Մշակութային կեդրոնին մէջ, Բ. յարկ:

Նորիկ անդամներ կ'ընդունուին փորձերու օրերու ժամերուն, կամ՝ հեռաձայնելով 03 - 442365 թիւին:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՀԻՄՆԱՐԿ

(Գործակցութեամբ եւ հովանաւորութեամբ Երեսփոխան Պետական Համալսարանի)

Համագործակցութեամբ՝ Ազգ. Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդին

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ԽՏԱՅԵԱԼ ԴԱՍԸՆԹԱՅՔ

Հայերէնի բարելաման անվճար ձեռնարկ՝ պատանիներու, երիտասարդներու, մայրերի ու դասաւանդող ուսուցիչներու եւ հայկական հաստատութիւններու պաշտօնեաներուն համար

90 ժամեայ դասաւանդութիւն՝ 4 Նոյեմբեր 2003 - 13 Յունիս 2004

Դասաւանդութեան օրեր՝ ամէն Երեքշաբթի եւ Հինգշաբթի, երեկոյեան ժամը 5:00 - 6:30, Մ. եւ Հ. Արալանեան ճեմարան, Մըզիթ:

Դասընթացքի ասարդին՝ համապատասխան վկայագիր

Մանրամասնութեան համար հեռաձայնել **04 - 712603, 04 - 712604, 03 - 429685** թիւերուն

Մայրեկի կատարելագործման կրթութիւն

ԿԻՐԱԿԻ ՕՐՈՒՄՆ ԸՆԴՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄՈՎ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴՆ Ե ԱՆԹԻԼԻԱՍԻ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԴԱՇՏԸ»

Կ'ԸՍԵ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Կիրակի, 26 Հոկտեմբեր 2003ի առաջօրյակին, Անթիլիասի Մայր տաճարին մէջ մատուցուող Ս. եւ անմահ պատարագի ընթացքին Ն. Ս. Օ. Տ. Արամ Ա. կաթողիկոս հայրապետական պատգամ փոխանցեց մեր ժողովուրդին, Անթիլիասի մէջ վերջին երեք օրերուն գումարուող ժողովներու ավարտին: Իր պատգամին սկիզբը, Նորին Սրբութիւնը Աւետարանէն մէջ բերելով Քրիստոսի խոսքը՝ «չեկայ ծառայութիւն ընդունելու այլ ծառայութիւն», մեկնաբանեց մեր կեանքը: Սրբաբանեց մեր քիչ մէջ ծառայութեան գաղափարին կարեւորութիւնը: Ան ըսաւ. «Քրիստոս միայն ծառայի կերպարանը չառաւ, այլ ծառայեց: Սովորական հասկացողութեամբ պէտք է ըմբռնել ծառայութիւնը: Անիկա պէտք է ունենայ խորք ու որակ: Քրիստոս ծառայութեան ճամբուն վրայ իր արիւնը թափեց: Առաքեալներ ծով ծառայութիւն մատուցին եւ նահատակուեցան այդ ճամբուն վրայ»: Ապա, վեհափառ հայրապետը եկեղեց-

ւոյ առաքելութիւնը նկատեց ծառայութիւն: «Եկեղեցւոյ՝ եկեղեցի՝ ըլլալու արժէքը ո՛չ աստուածաբանութեամբ, ո՛չ նուիրապետական կարգերով, ոչ ալ ժողովուրդի քանակով կը չափուի, այլ ծառայութեան որակով: Այլ խօսքով՝ հաւատարմութեամբ, Մեծ Մատային ցոյց տուած ծառայական ճամբուն», ըսաւ ան:

Շարունակելով իր պատգամը, վեհափառ խօսեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան առաքելութեան մասին, որուն կեանքը ուրիշ բան չէ եթէ ոչ ծառայութիւն: «Մեր Ս. Աթոռին կեանքին իւրաքանչիւր էջը ծառայութեամբ արձանագրուած է: Աւելուած իւրաքանչիւր քայլը ծառայութիւն կ'ենթադրէ: Մեր մշակած ծրագրերն են: Այլ խօսքով, Անթիլիասի կեանքը ծառայութիւն է, գործը ծառայութիւն է, ճամբան ծառայութիւն է, փառքը ծառայութիւն է ու ծառայութեան աղբիւրը ու դաշտը՝ ժողովուրդն է: Մենք ժո-

ղովուրդէն եկած ենք ու ժողովուրդին կ'երթանք իրեն ծառայելու, աւետարանական ճամբարներով ու բարոյական արժէքներով, մեր ժողովուրդին կեանքը հարստացնելու, մեր ժողովուրդին կարիքներուն ընդառաջ երթալու, մեր ժողովուրդին ցաւերը ամոքելու, մտահոգութիւնները բաժնետու, ժողովուրդին հետ ու ժողովուրդին համար ըլլալով: Այսպէ՛ս պէտք է ըլլայ եկեղեցին, այսպէ՛ս կը փորձէ ըլլալ Անթիլիասը: Ժողովուրդը անձնապէս մեր ծրագրերն են: Նորին Սրբութիւններուն ու մտահոգութիւններուն մէջ մնալուն ներկայութիւն է: Կը փորձենք մեր լաւագոյնը տալ մեր ժողովուրդին՝ ծառայութեան ճամբով: Այս Ս. Աթոռին հայրապետները ջարդ ու գաղթականութիւն տեսան, մեր ժողովուրդին հետ եղան, Սփիւռքի կազմաւորման մէջ յայտնուեցան, հայ ժողովուրդին կողքին այնքան վճռական դեր ունեցաւ: Նորին Սրբութիւններուն պահանջատիրութեան, հայ մշակութային արժէքներու տարածման, հայ դպրոցի հաստատման, ընկերային պահանջատիրութեան եւ այլ բնագաւառներու մէջ մեր ժողովուրդին կարիքներուն ու սպասումներուն այնքան օգտակար հանդիսացաւ այս Ս. Աթոռը: Մենք պիտի շարունակենք քայլի դէպի ժողովուրդ, գաղթածառայութեան ճամբէն, մեր միաբանութեամբ, մեր թեմական կառուցներով», ըսաւ վեհափառը:

Պատարագէն ետք վեհափառի դահլիճին մէջ վեհափառ հայրապետը ընդունեց սաջահատուցող Ձէյթիւնի Հայրենակցական Միութեան անդամներուն, Ձէյթիւնի հերոսամարտի յիշատակին մատուցուած պաշտօնական հոգեհանգստեան աւիթով:

ԱՐԱՄ ԽԱԶՉԱՏՈՒՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ ՀԱՐԻՐԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԲԱՐՉՐՈՐԱԿ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ ՄԸ

Մեծանուն երաժիշտ Արամ Խաչատուրեանի ծննդեան հարիւրամեակին համահայկական եւ միջազգային տօնակատարութիւններուն անգամ մը եւս իր ներդրումը կը բերէ Համազգայինի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը՝ կազմակերպելով յոբելեարին ձօնուած նուագահանդէս մը: Միջազգային հուշակ վայելող հայրենի դաշնակահար Արամին Պապարխանեանի եւ հայրենի տղանդաւոր երիտասարդ ջութակահար Մարտին Եաւրեանի երաժշտական տղանդները մատուցող այս նուագահանդէսը, որ կը վայելէր Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեանի հովանաւորութիւնը, տեղի ունեցաւ Շաբաթ, 25 Հոկտեմբերի երեկոյեան ժամը 8:30ին, Պէյրութի Ամերիկեան համալսարանի «Էսեմպլի Հոլ» սրահին մէջ, ներկայութեամբ լիբանանահայ հոգեւոր պետերու, ազգային կազմակերպութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներու, պախանեան, որ շուրջ տարի մը առաջ Նոյն սրահին



Ashnag

երաժշտասէրներու: Արամ Խաչատուրեանի հարիւրամեայ յոբելեանին նուիրուած այս նուագահանդէսը բնականաբար կարեւոր բաժին յատկացուցած էր երաժիշտին ստեղծագործութիւններուն: Յայտագիրին առաջին բաժինով Հանդէս եկան ջութակահար Արամին եւ ջութակահար Մարտինի «Պարտալո» պարի մը երաժշտական ջութակահարութեան մը վայելքը:

Յայտագիրին երկրորդ բաժինով Արամին Պապարխանեանի միացաւ խոստումնային ջութակահար Մարտին Եաւրեան, որ իր բարձրորակ կատարումներով մեծապէս տպուկութիւններ էր ստեղծելով յոբելեարին ներկայացուցիչներուն համար: Մարտինի «Պարտալո» պարի մը երաժշտական ջութակահարութեան մը վայելքը:

Յայտագիրին երկրորդ բաժինով Արամին Պապարխանեանի «Էլէգիա»՝ ձօնուած նուագահանդէսը, որ իր բարձրորակ կատարումներով մեծապէս տպուկութիւններ էր ստեղծելով յոբելեարին ներկայացուցիչներուն համար: Մարտինի «Պարտալո» պարի մը երաժշտական ջութակահարութեան մը վայելքը:

Արամ Խաչատուրեանի ստեղծագործութիւններուն մէջ փունջին գեղեցիկ մեկնաբանութիւնը եղող այս նուագահանդէսը արժանաւոր մասնակցութիւն մը եղաւ անոր յուսարտեցալ ներկայներուն տօնակատարութիւններուն:

ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԼԻԱԿԱՏԱՐ ՆԻՍՏԵՐ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Սեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Ազգային կեդրոնական վարչութեան կրօնական ու ժողովուրդին կարիքներուն ու սպասումներուն այնքան օգտակար հանդիսացաւ այս Ս. Աթոռը: Մենք պիտի շարունակենք քայլի դէպի ժողովուրդ, գաղթածառայութեան ճամբէն, մեր միաբանութեամբ, մեր թեմական կառուցներով», ըսաւ վեհափառը:

Լիասի Սայրափանքին մէջ, նախագահութեամբ Ն. Ս. Օ. Տ. Արամ Ա. կաթողիկոսի, Հինգշաբթի 23 Հոկտեմբեր 2003ի առաջօրյակին:

Կեդրոնական վարչութեան զոյգ ժողովները իրենց կալուածներէն ներս քննարկեցին անցնող ամիսներուն կատարուած գործունէութիւնները եւ սպառնալից հետեւկարները: Կրօնական ժողովի օրակարգը ընթացաւ քրիստոնէական դաստիարակութեան, հայ եկեղեցւոյ բարեկարգչական հարցերու, միջեկեղեցական յարաբերութիւններու, ինչպէս նաեւ քրիստոնէական եկեղեցւոյ կեանքը յուզող խնդիրներու քննարկումով, որոնց համար ժողովական հայրեր կատարեցին շինիչ առաջարկներ եւ առին համապատասխան որոշումներ: Քաղաքական ժողովը իր կարգին համապարփակ օրակարգով վերաբեւոյժան երթարժեւորման ենթակեց կաթողիկոսութեան ներքին ազգային, թէ արտաքին՝ միջազգային գործունէութիւնը, վարչական ու տնտեսական հարցերն ու կիլիկեան Ս. Աթոռին յարաբերական երեսները: Եւրոպայի ժողովական շախատանքները աւարտեցան Շաբաթ, 25 Հոկտեմբերին: Անթիլիասի մէջ ժողովականները ներկայ գտնուեցան նաեւ կաթողիկոսարանին կողմէ կազմակերպուած մշակութային զանազան ձեռնարկներու, իսկ Կիրակի 26 Հոկտեմբերին, ժողովականները ներկայ գտնուեցան Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարին մէջ մատուցուած հանդիսաւոր Ս. եւ անմահ պատարագին: Նշենք, որ ժողովական որոշումները հրապարակուած են արդէն, եւ զանոնք պիտի հրատարակենք Զորքաբեր թրական մեր թիւով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգային առաջնորդարանը դիմումներ կ'ընդունի դիւանապետի պաշտօնին համար: Թեկնածուն պարտի լրացնել հետեւեալ պայմանները.

- 1.- Տիրապետել հայերէն եւ արաբերէն լեզուներուն եւ ծանօթ ըլլալ անգլերէնի կամ ֆրանսերէնի:
- 2.- Ունենալ համալսարանական վկայական:
- 3.- Ունենալ համապատասխան աշխատանքի լորջ փորձառութիւն:

Թեկնածուն կը պահանջուի՝ Ներկայացնել իր կենսագրական (CV)՝ հետեւեալ հասցին՝

- Ազգային առաջնորդարան, Պուրճ Համուտ, Արաբս փողոց
- կամ e-mail azkayin@inco.com.lb
- Fax (01) 258305

ԴԻՒԱՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՈՉ ՄԷԿ ԱՆԳՈՐԾ ՇՐՋԱՆԱԿԱՐՏ» ԱՐՇԱԻՆ

- 1.- Այսօր POLYGLOT COLLEGEի EMPLOYMENT DEPARTMENTը իր տեղը ունեցաւ 244 ընկերութիւններու, դրամատուներու, գործատեղիներու Recruiting Dept.ի պաշտօնէութեան ցանկին մէջ:
- 2.- 46 անգործ շրջանաւարտներ ստանձնեցին իրենց նոր պաշտօնները Լիբանանի եւ Ծոցի երկիրներու մէջ:
- 3.- Իրենց դասերուն փութաբար քոլէճի 28 ուսանողներուն ապահովուեցաւ կիսաժամ աշխատանք:
- 4.- Մանկավարժութեան մեր ԲՈՒՆՈՐ շրջանաւարտները գործի վրայ են, ոմանք Լիբանանի ամենայնառաջադէմ դպրոցներու մէջ:
- 5.- Նոյեմբեր 1էն սկսեալ պիտի ընդունին դիմումներ նաեւ այլ վարժարաններէն շրջանաւարտ կարիքաւոր ուսանողներու:

ԾԱՆՕԹ.- POLYGLOT EMPLOYMENT DEPT.ը ՈՉ ՄԷԿ ՆԻԹԱԿԱՆ ՊԱՐՏԱԳՐԱՆԵՔ կը դնէ, ըլլա՛յ պաշտօնեային, ըլլա՛յ գործատիրոջ վրայ:

ՓՈԼԻԿԼՕԹ ԲՈԼԵՃ

Իր պայքարը պիտի շարունակէ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹԵԱՆ ղէմ, որովհետեւ ան նուաճած է.

- Ա.- ՄԱԿԱՐԴԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱԻԵՐԸ
- 1.- Վկայ պետական քննութեանց մէջ քոլէճի արձանագրած բացառիկ յաջողութիւնը, համալիբանանեան չափանիշով:
- 2.- Վկայ իրերայաջորդ կրթական նախարարներու վկայութիւնները:
- 3.- Վկայ քոլէճի շրջանաւարտներու պերճախօս վկայութիւնները:
- 4.- Վկայ այլ վարժարաններէ ՏՄՍՆԵԱԿՆԵՐՈՎ ՆՈՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՓՈԽԱՆՅԱԳՐԵՐԸ, որուն դիմաց ՈՉ ՄԷԿ ՓՈԽԱՆՅԱԳՐԻ ՊԱՀԱՆՁ՝ քոլէճի ուսանողներէն:

Բ.- ՓՈԼԻԿԼՕԹ ԲՈԼԵՃ նուաճած է ԹԻԻԻ մարտահրաւերը

Կարենայ ընդունելու համար յաւելեալ 75 աշակերտներ եւս, քոլէճի հարկադրուած եղաւ ընդարձակելու իր տարածութիւնը երրորդ յարկով մը:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

22 Հոկտեմբեր 2003

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՀԻՄՆԱՐԿ

(Գործակցութեամբ եւ հովանաւորութեամբ Երեւանի Պետական Համալսարանի)

Հայկական Նախակրթարաններու Ուսուցիչներու Որակաւորման Դասընթացը

Համագործակցութեամբ՝ Ազգ. Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդին

- ՆՊԱՍԱԿ Ուսուցիչներ օժտել անհրաժեշտ գիտելիքներով, համապատասխան լիբանանեան կրթական նոր համակարգի առաջարկներով:
- Դասախօսութիւններ, քննարկումներ, գործնական կիրառումներ եւ խմբակային աշխատանք:
- Տեսողութիւն

2003 Նոյեմբերէն 2004 Յունիս

Ամիսը մէկ անգամ Շաբաթ օրերը, ժամը 8:30-էն 1:30

- Վայր.- Մ. եւ Հ. Արսլանեան Գեմարան, Մրզիք

Դասընթացի աւարտին՝ համապատասխան վկայագիր

Մանրամասնութեանց համար հեռաձայնել 04 - 712603, 04 - 712604, 03 - 429685 ԲԻԵՐՈՆ

Հայ Դպրոցի Զարգացման

ԱԿՆԱՐԿ

ԶԱԲԱՆՔԻՆ ՀԵՏ

Յառաջիկայ ամսուան 2ին, Կիրակի օր, Վրաստանի մեջ տեղի պիտի ունենան խորհրդարանական ընտրություններ, որոնց համար վրացական պետական շրջանակները լծուած են երկրի հայ բնակչության և լատիական Չաւախքի հայության քուէները դարպասելու աշխատանքին:

Հիմա, ինչպէս բոլոր երկիրներու նախընտրական ժամանակաշրջանին, վրացի իշխանատուներ թէ թեկնածուներ խոստումներ տալու տրամադրութիւններու մէջ են: Իշխանամետ, թէ ընդդիմադիր շրջանակներ հաւասարապէս պէտք ունին հայկական քուէներուն: Այդ կը նշանակեն իրենց այցելութիւնները և հանդիպումները հայկական պատասխանատու շրջանակներու հետ:

Վրացական կողմը նաեւ հակասութեան մէջ դրած է ինքզինքը: Այսպէս, մէկ կողմէ փորձ կը կատարուի սիրաշահելու վրացահայութեան քուէն, իսկ միւս կողմէ, իրենց ցանկերուն վրայ գործնապէս «անընտրելի» դիրքերու վրայ պետեղած են հայ թեկնածուներ՝ անուանական նկատելով խորհրդարանին մէջ հայ պատգամաւոր մը ունենալու իրենց իսկ փափաքը: Տարբեր խօսքով, անոնք կը փորձեն վրացահայութեան աչքին փոշի ցանել:

Ճիշդ է, մենք, իբրեւ ամերիկահայութիւն, Չաւախքէն հապարտոր մղոն հեռու ենք, սակայն մօտէն կը հետեւինք այնտեղի պարզացումներուն և մտահոգ ենք Չաւախքի հայութեան մարդկային, բնկերային ու տնտեսական իրաւունքներու անտեսումով: Այս ընտրութիւնները լաւագոյն առիթն են, ընդհանրապէս վրացահայութեան և լատիական ջաւախքահայութեան համար, որ ինքզինք ու իր քուէն արժեցնէ և պատգամ մը յղէ Թիֆլիսի իշխանութեան (կամ անոր ձգտողներուն), որ ցարդ անկատար մնացած խոստումներով կարելի չէ օրօրել Վրացական կողմը, իր կարգին, պէտք է անդրադառնալ, որ միայն խոստումներու լեզուով կարելի չէ խօսիլ վրացահայութեան և լատիական Չաւախքի հայութեան հետ:

Ամերիկահայութիւնը մտահոգ է Չաւախքի հայութեան ծանր կացութեամբ, որուն մէջ պատասխանատու են Թիֆլիսի իշխանութիւնները: Հիմա անդրադառնալու լաւագոյն առիթն է վրացական կողմին համար, որ պէտք է վերջ տայ իր անտեսումի քաղաքականութեան, որովհետեւ ընտրութիւնները շատ մօտ են:

ՎԱԶԷ ԲՐՈՒՏԵԱՆ

Ե՞ՐԲ ՂԱՐԱԲԱՂԸ ՀԱՆԴԵՍ ՊԻՏԻ ԳԱՅ ԻԲՐԵԻ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿՈՂՄ

Երկար ժամանակէ ի վեր կանգ առած են Հայաստանի եւ Ազրպէյճանի ուղղակի հանգիպումներուն միջոցով վարուող բանակցութիւնները Լեւոնային Ղարաբաղի հիմնահարցին շուրջ:

Յարաբերական այս դադարը պայմանաւորուած էր Հայաստանի եւ Ազրպէյճանի մէջ տեղի ունեցած ընտրութիւններուն շղթայով, ընտրութիւններ, որոնց վերջին օղակը Ազրպէյճանի մէջ 15 Հոկտեմբերին տեղի ունեցած նախագահական ընտրութիւնն էր:

Այս վերջին ընտրութեան արդիւնքները դեռ պաշտօնապէս չհրատարակուած՝ արդէն նկատելի է շահագրգիռ ուժերուն կողմէ դադարը վերջացնելու միտումները, եւ մէկը միւսին ետեւէն շրջան այցելող եւրոպացի պաշտօնեաները բանակցութիւնները աշխուժացնելու ազդանշաններ կու տան:

Այս վերաշխուժացման նախօրեակին կրկին ինքզինք կը պարտադրէ վերջին տարիներուն կրկնուող հարցադրուածքը. ինչո՞ւ Լեւոնային Ղարաբաղը մասնակից չէ իր բեւ բանակցութիւններու կողմ:

Կասկած չկայ, թէ միջնորդները՝ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան դեկլարաններուն հետ իրենց ունեցած հանդիպումներով համոզուած են, որ վերջնական լուծումը չի կրնար ձեւաւորուել առանց Լեւոնային Ղարաբաղի անմիջական դերակատարութեան: Կասկած չկայ, որ նոյնիսկ Ազրպէյճանը չյայտարարուած նոյն համոզումը ունի: Այստեղ պէտք չէ նաեւ կասկած ունենալ, որ մեր կողմէ նման պահանջ յառաջ քաշելը չունի ներհայկական հատուածականութիւն հրահրելու միտում, այլ էապէս կը ըլի քաղաքական նկատառումներէ, երբ գիտենք, թէ հարցին նման մօտեցումը հայկական դիւանագիտութեան նաւարկելու աւելի լայն կարելիութիւն կրնայ տալ եւ կը թեթեւեցնէ արտաքին հաւանական ճշգրտումներուն ծանրութիւնը:

Վերոնշեալ ուղղութեան գծով դրական պէտք է նկատել եւրոպացի բարձրաստիճան պաշտօնեաներու հանգիպումը Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Արկարի Ղուկասեանի հետ, Երեւանի մէջ: Սակայն, Արցախի դերակատարութեան աշխուժացման իմաստով աւելի դրական քայլ պիտի ըլլար նման հանդիպումներուն նոյնիսկ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան մարտադաշտ Ստեփանակերտի մէջ կայացումը, ինչպէս նաեւ՝ Արցախի հարցով տարուող բանակցութիւններուն մէջ Լեւոնային Ղարաբաղին իբրեւ կողմ հանդէս դալու կարելիութիւններու ստեղծումը:

«ՀԱՅՐԵՆԻՔ»-Ի ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

100ԱՄԵԱՅ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

Հայ մեծանուն արուեստագէտին նուիրուած տարարձոյթ էլոյժները, ըլլան անոնք համերգային, նուագախմբային, զասախօսական, պարային կամ յուշ-երեկոյ, կը նմանին իրարու: Կրնայ անոնց արտաքին ընդթր տարբեր ըլլալ, բայց խորքը կը մնայ միեւնոյնը, որովհետեւ անոնք կը կապուին մէկ ու միակ անունի մը՝ Արամ Խաչատուրեան:

Սրտաբերն ընդթր կը խօսի համամարդկային արժեքներու մասին, բայց անոր խորքը հայկական է, որովհետեւ զայն ծնող հրահրը, իր ազգային ճանաչողութեան եւ ենթակայութեան խոստումին ներուժը ինքնուրոյն շեշտադրումով հայկական լիցք ունի:

Խաչատուրեանի գործերէն ընդհանրապէս «Սպարտակ»ը, 1963էն մինչեւ այսօր կը ներկայացուի Աթէնքի ամառային փառատօնին: Նշուած թուականին, Խաչատուրեան անձամբ ղեկավարած էր Աթէնքի պետական նուագախումբը: Արքրփոխի փեղ ղեկավարու ունեցած էր նաեւ իր սրտի առաջին թեթեւ խոսքը: Սակայն, այն ինչ որ կը ներկայացուի այսօր, տարբեր է ու հասկնալի: Ամբողջ համերգ մը՝ ձօնուած իրեն: Խաչատուրեան սիրուած է Յունաստանի մէջ՝ եւ այս համերգը՝ շարունակուող սիրոյ կենդանի արտայայտութիւնն է:

«ԱԶՍ ՕՐ»

«ԱԶԳԱԿ»-Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻՒԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն. - 258526, 260115 եւ 241274:

ԶԱՒԱՆԻՔ
Լ. Յ. Գ. ԼԻՍԻՆՆԻՆ 2ԱՅ ԳԱՍԻ ԴՈՒՐՈՒՄԻՆ
ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ ԶԱՒԱՆԻՔ
Լուսանկարիչ՝ ՀՐԱՅԻՐ ԲԱՅԻ
Բացում՝ Երկուշաբթի, 3 Նոյեմբեր 2003. Երեկոյեան ժամը 8:00-ին
Լեւոն եւ Լիֆիա Յակոբեան Լիզբայիմ Գոլէճ
Դրանք՝ Յուցահանդէս պիտի շարունակուի Երեկոյեան ժամը 10:00 - 21:00
Չորեկոյեան ժամը 10:00 - 11:00
ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱՒԱՐ
Բանաստ՝ ԸՅԼ. Հայկազուն Լիզբայեան
Գեղարուեստական Ֆայտագիր
Երեկոյեան ժամը 8:00-ին
Ֆակոր ՏԵՐ ԴԵՂՈՒՄԻԱՆ ԲԱՍԵՐԱՍՐԱՅ
Ս.ՇԱՄԻՆՍԿԻ, ՀԱՒԱՐ
Չորեկոյեան ժամը 11:00-ին
Ատաւոտեան ժամը 11:00-ին
Ֆակոր ՏԵՐ ԴԵՂՈՒՄԻԱՆ ԲԱՍԵՐԱՍՐԱՅ
ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱՒԱՐ ԵՒ ԶՈՒՅՆԱՆԻՔ
ՅՈՒՅՆԱՆԻՔ ԵՒ ԶՈՒՅՆԱՆԻՔ
Չորեկոյեան ժամը 7:00-ին
Երեկոյեան ժամը 7:00-ին
«Գ. Դիւլիպիկեան» օրահ
Ն.ՈՒՐՄԱՆԻՔ, ՅՈՒՅՆԱՆԻՔ
Հիցքաբթի, 6 Նոյեմբեր 2003
Երեկոյեան ժամը 7:00-ին
Ազատամարտ Լիզբայեան Էջրեփե
ՈՒՍՏՆՈՎՈՒՄ, ՀԱՒԱՐ
Ուրբաթ, 7 Նոյեմբեր 2003
Կէսօրուան ժամը 12:00-ին
Կազմակերպութեամբ՝
Հայկազուն Համալսարանի «Heritage Club»-իմ
Հայկազուն Համալսարանի օրահ
Ն.ՈՒՐՄԱՆԻՔ, ՅՈՒՅՆԱՆԻՔ
Շաբաթ, 8 եւ Կիրակի 9 Նոյեմբեր 2003
Ժամը 10:00-21:00
Լիզբայեան 2 ԴԵՂՈՒՄ ԴԵՂՈՒՄ
Բարգաւաճակութեամբ
Համալիք Լիզբայեան

ԼՕԽԻ «ԱՐԱՆՍԻ ՊՈՒԼՂՈՒՐՃԵԱՆ»
ԸՆԿԵՐԱԲՈՒՅՎԱԿԱՆ ԿԵՂՈՆ
ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆՆԱԿ
ԿԻՆԵՐՈՒ ԳԱՍՏԻՐԱԿԶԱԿԱՆ
ԾՐԱԳԻՐ
Հաճոյքով կը յայտարարենք, թէ 2003-2004 տարեշրջանի կինոնոյն յատուկ համակարգիչի, արարերուն եւ անգլերէն լեզուներու դասընթացներու արձանագրութիւնները կը կատարուին 23էն 30 Հոկտեմբեր 2003, առաւօտեան ժամը 10:00էն 12:00 ԼՕԽԻ «Արաքսի Պուլղուրճեան» ընկերաբժշկական կեդրոն, Ա. յարկ, Ընկերային Ծառայութեան Գրասենեակ:
Յաւելելով մանրամասնութեանց համար կը խնդրուի անձամբ ներկայանալ:

ԱԿՆԱՐԿ

ԿԱՐԵՒՐ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՄԵ ՍՏԱՀՈՒՅՉ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

(Գ. Յ. Դ. ՉՈՍԻ ՈՂՉՈՒՆԵԼԻ ՆԱԽԱԶԵՆՈՒԹԵԱՆ ԱՌԻՈՎ)

Ամիսներու լուրջ ու կապակերպուած աշխատանքէ մը ետք, Հ. Յ. Դ. Չաւախքեան Ուսանողական Միութիւնը ներկայացուց «Լիբանանահայ ուսանողութեան ազգային յանձնառութիւնը» ուսումնասիրութեան արդիւնքները, կլոր սեղանի մը ընթացքին:

Սոյն ակնարկը կլոր սեղանին չի վերաբերիր այնքան, որքան անոր ընթացքին յայտարարուած ուսումնասիրութեան արդիւնքներուն: Սակայն նախքան այդ արդիւնքներուն անցնիլը, փակագիծ մը բանանք եւ նշենք, որ կլոր սեղանին ընթացքին պարզուած ներկայութեան պատկերը ոչ միայն ողջունելի է, այլեւ յոյս կը ներշնչէ մեզի իբրեւ գաղութ: ՉՈՍՐ յաջողած էր ի մի բերել մեր գաղութին աշակերտական և ուսանողական բոլոր հոսանքները, ինչ որ աւելի քան գօտեպնդող է, ինչպէս նաեւ միաժամանակ կը յուշէ բոլորիս, թէ ընդառաջող հոսանքները գիտակից են նման յոյժ կարեւոր թեմայի մը նկատմամբ, բան մը, որ իր կարգին ողջունելի է անկասկած:

Վերադառնալով մեր բուն նիւթին՝ ուսումնասիրութեան արդիւնքին (որուն մասին ՉՈՍՐ մանրամասն գրքով մը պատրաստած է), ամէն բանէ առաջ կը մտահոգէ մեզ իբրեւ գաղութ: Երբ արդիւնքներէն ի յայտ կու գայ, թէ լիբանանահայ ուսանողութեան մէկ ուշագրաւ տոկոսը ազգային յանձնառութեան առումով տազնապէս կ'ապրի ու այդ իմաստով վիրաւոր է ան, ապա անխուսափելիօրէն կը ծագի հետեւեալ հարցումը. արդեօք լիբանանահայ վարժարաններն ու միութիւնները, ի՞նչ գոյնի ու հոսանքի այ որ պատկանին, յաջողա՞ծ են յանձնառութեան գիտակցութիւնը բարձրացնելու փոխանցելու հայ աշակերտին: Ի վերջոյ մեր համայնարանական ուսանողները բոլորն այ օտար վարժարան չեն յաճախած, ընդհակառակը, անոնց մեծամասնութիւնը հայկական վարժարաններու շրջանաւարտներ են, որոնցմէ բաւական մեծ տոկոս մը ահաւասիկ փաստօրէն կը տառապի ազգային յանձնառութեան պակասէ: Այդ, ճիշդ է, որ ունինք նաեւ իր յանձնառութեան տէր ուսանողներին մը, ի պատիւ մեր գաղութին, սակայն այդ պատիւին ու փառքին անմասն մնացողները կարելի չէ ձգել այդպէս:


Այս մասին այլ առիթով հաւանաբար կ'արժէ ու պէտք է աւելի լայն խօսիլ, գրել, հարցը արծարծել: Սակայն ակնարկի մը ներսահմաններով այդ մէկը հնարաւոր չէ: Սոյն ակնարկը միայն հարցումը կը դնէ ամենայն առարկայականութեամբ, առանց դիրքորոշումի, ու կը սպասէ պատասխանին: ՉՈՍՐ իր ուսումնասիրութեամբ յայտնաբերեց այս շատ վտանգաւոր երեւոյթը: Այլ խօսքով, ՉՈՍՐ բացառ կարեւոր գործելադաշտի մը ճամբան: Անրոյժ գաղութը, իր բոլոր հոսանքներով, այնպէս ինչպէս գիտակցութիւնը ունեցաւ ի մի խմբուելու եւ մասնակցելու կլոր սեղանին, նոյնպէս ու միեւնոյն գիտակցութեամբ պէտք է այլ կլոր սեղանի մը շուրջ համախմբուի եւ տայ վերաշխուժող հարցադրումի պատասխանը: Եւ եթէ ի յայտ գայ, որ մեր վարժարաններն ու մեր միութիւնները իրենց մեղքը ունին հայ ուսանողութեան պարզած այդ մտահոգիչ ու վտանգաւոր կացութեան մէջ, ապա վարկեան առաջ պարտին, պարտի՛նք սրբագրել յայն, յանուն մեր գաղութի գոյատեւան եւ ընդհանրապէս յանուն մեր առաքելութեան անաղարտ պահպանման:

Հ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ԼՕԽԻ
ԱՐՅԱԽ ՄԱՍՆԱԾԻՂ
ԱՆԴԱՄԱԿԱՆ Ա. ԺՈՂՈՎ
Տեղի կ'ունենայ Չորեկոյեան, 29 Հոկտեմբեր 2003, առաւօտեան ժամը 9:30ին, «ԱՐԱՆՍԻՆՍ. Մ. Ը. Մ.» Մարզամշակութային համալիրին մէջ:

«ԱԶԳԱԿ»
ԳԵՄԱՌ ԴԵՍ
Մօտ Օրէն...
Մարզամշակութային համալիրին մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ «ՊԻԷԼ»-Ի ԶԲՕՍԱՇՐՋԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ ԸՆԹԱՑՔԻՆ



Նախագահ գործիչ Լևոն Լևոնյանի հովանավորությամբ և Լիբանանի գրաստանի նախարարության կողմից կազմակերպված «ՊիԷլ» մեջ տեղի ունեցած զբոսաշրջության յատուկ ցուցահանդես մը, որուն մասնակցեցան զանազան երկիրներ, որոնց կարգին Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը՝ իրենց իւրաքանչիւր տաղաւարով:

Հայկական տաղաւարը, կ'ընդգրկէր Հայաստանն ու Արցախը անջատարար ներկայացնող տարբեր տեսակի յուշանշաններ եւ արտադրութիւններ:

Հայկական տաղաւարին պատասխանատուները Լիբանան եկած էին իրրեւ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչներ, սակայն անոնք միաժամանակ կը ներկայացնէին Հայաստանն ու Ղարաբաղը: Տաղաւարին պատասխանատուները կը ներկայացնէին Ստեփանակերտի մէջ գործող «Ասպար» գրաստանի ընկերութիւնը: Տաղաւարը օժտուած է Հայաստանի եւ Արցախի խորհրդանշական յատուկ պատկերներով, որոնք որմագրի ձեւով ծածկած են ամբողջ տաղաւարը: Իսկ ներկայացուցիչները եղած է յատուկ պրակներով:

«Ասպար» ընկերութեան ներկայացուցիչները շեշտեցին, որ տաղաւարին նպատակն է Արցախը ներկայացրնել իրրեւ զբոսաշրջական երկիր:

Ըստ ներկայացուցիչներուն, լիբանանցիները յատուկ հետաքրքրութեամբ մօտեցած են տաղաւարին մէջ ցուցադրուած արտադրութիւններուն: Գնահատելով Հայաստանի մէջ զոյգութիւն ունեցող քրիստոնէականի արժէքները՝ անոնք ղէպի Հայաստանն ու լեռնային Ղարաբաղը կատարելու փոփոք յայտնած են: «Բաւական աշխուժ եղաւ մեր տաղաւարին ներկայացուցիչները, ինչպէս նաեւ՝ տարբեր ընկերութիւններու կողմէ ցուցադրուած յատուկ վերաբերմունքը», ըսին տաղաւարին ներկայացուցիչները:

Անոնց տեղեկութիւններուն համաձայն, օտար երկրացիներու (ոչ սփիւռքահայեր) Հայաստան մուտքը բաւական աւելցած է, մասնաւոր վերջին երկու տարիներու ընթացքին: Անոնք աւելցուցին, որ Հայաստան եւ Լեռնային Ղարաբաղ այցելող շաղկերտներուն թիւն ալ ան արձանագրած է: Անոնք զիտել տուին որ աշակերտներուն կողմէ նման այցելութիւններ շատ օգտակար են եւ անհրաժեշտ:

www.hamazkayin.com

ԱՅՀԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE

- Over Bed Table
- All Kinds Of Oxygen We Also Provide
- Laboratory service.
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

**ՑՈՒՑԱՐԱՐՈՒՄ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԵՐ
ԳՐԱՍԵՆՆԵԱՎ ԱՅՀԻԼ, ԱՅԵՏԻ ԺԵՆԵ, Բ. ՅԱՐԿ
ԾՆՈ. (02) 242553/7**

**NO MATTER WHAT YOU NEED...
... OR WHERE YOU NEED.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ - ՀԱՅԱՍՏԱՆԻ - ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ԵԳԻՊՏՈՍԻ ԴԵՍՊԱՆԸ ԿԸ ՅԱՆՉՆԵ ԻՐ ՀԱՄԱՍԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան 21 Հոկտեմբերին ընդունեց Հայաստանի մէջ Եգիպտոսի դեսպան Ապրիլ Մուհամմէտ Ապտ Ռահման Օսմանը (նստավայրը՝ Երեւան): Վերջինս, որ իր հաւատարմագիրները յանձնած է Հայաստանի նախագահին, նաեւ փոխանցած է Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուպարաբի ողջունները:

Հայաստանի նախագահ Ռ. Քոչարեան համոզմունք յայտնած է, որ երկու երկիրներուն միջեւ միջնադարեան ժամանակներից յարաբերութիւնները նոր նշանակուած դեսպանին պաշտօնավարութեան ընթացքին աւելի կ'աշխուժանան: Շեշտելով, որ Հայաստանը մեծապէս կարեւոր կը նկատէ Եգիպտոսի հետ երկկողմանի համագործակցութեան զարգացումը, Ռ. Քոչարեան գոհունակութիւն յայտնած է հայ-եգիպտական քաղաքական յարաբերութիւններուն ներկայ մակարդակին համար:

Նախագահ Ռ. Քոչարեան նաեւ րսած է, որ Եգիպտոսի հայկական գաղութը լրացուցիչ գործած մըն է, որ կը նպաստէ երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւններու սերտացումը:

Քննարկելով երկկողմանի յարաբերութիւններու զարգացման կարելիութիւնները, նախագահը եւ Եգիպտոսի դեսպանը նշած են, որ գործակցութեան ընդհանուր եզրեր կան, եւ անհրաժեշտ է ուսումնասիրել եւ գտնել զանոնք: Ըստ նախագահ Ռ. Քոչարեանի, երկու երկիրներուն համագործակցութիւնը տնտեսութեան մարզին մէջ չի համապատասխանում գոյութիւն ունեցող կարելիութիւններուն: Իրրեւ համագործակցութեան կարեւոր մարզեր՝ նշուած են առողջապահութիւնը, ղեղադործութիւնը, մշակույթը եւ զբոսաշրջութիւնը:

ՆՈՅՏԵՐԵՐԻՆ ԲԱՅՈՒՄԸ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ «ՀԻՄՆԱ-ՀԱՐԱՒ» ՄԱՅՐՈՒՂԻ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ - ՀԱՄԱԼՊԱՍ ՀԱՏՈՒՄԸ

«Հայաստան համահայկական հիմնադրամ»-ին միջոցներով կառուցուող «Հիմնա-հարաւ» մայրուղիին Ստեփանակերտ-Հասանապատ հատուածը, որ 3,6 քմ. երկարութիւն ունի, պիտի սկսի գործի յառաջիկայ Նոյեմբերէն սկսեալ:

Շինարարութեան աշխատանքները իրականացնող «Վրէժ» ընկերութեան նախագահ Կարէն Յակոբեան ըսաւ, որ վերջին երեք տարիներուն ընթացքին ընկերութիւնը կառուցած է նաեւ մայրուղիին Դաշրուլաղ-Կիւան (7,5 քմ.), Ստեփանակերտ-Դաշրուլաղ (9,7 քմ.) հատուածները: Ներկայիս ընկերութիւնը վերջին աշխատանքները կը կատարէ Ստեփանակերտ-Հասանապատ հատուածին մէջ, ինչպէս նաեւ ձեռնարկուած է մայրուղիի Հատուած-Մակուռի (11,2 քմ.) հատուածի շինարարութեան, որուն բացումը յառաջիկայ տարի պիտի կատարուի:

**ԵԼԵԿՏՐՈՎԱԿԱՆ ՉՈՐՄ
ԵՆԹԱԿԱՅԱՆՆԵՐՈՒ
ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒՄԸ ՊԻՏԻ ԱՎԱՐՏԻ
2004Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ**

Հայաստանի չորս Շահումեանի, Եղէզնաձորի, Մարաշի եւ Զովունիի ելեկտրական ենթակայանները 2004ի Ելեկտրոէներճի պիտի սկսին գործել: Ըստ «Բարձրաժողով» ելեկտրացանցեր» ընկերութեան գլխաւոր տնօրէնին, այդ ենթակայաններու վերակառուցման աշխատանքներու ծրագիրը կը ֆինանսուորէ Համաշխարհային դրամատուները: Միջազգային նուազագուրգի իրրեւ կապալաւորուած ընտրուած է գուլիցերիական էյ. Պի. Պի. ընկերութիւնը: Ծրագիրին ընդհանուր արժէքը 9,2 միլիոն տոլար է: Ըստ ընկերութեան գլխաւոր տնօրէնին, յարող փուլով կը նախատեսուի վերանորոգել Լիճքի, Շինուհայրի, Արարատի եւ Աշնակի ենթակայանները: Աշխատանքները պիտի կատարուին միջազգային նուազագուրգի յաղթած «Սիմոն» ընկերութեան կողմէ:

**ՆԱՍԱԳԱՎԱԿ ԲՈՉԱՐԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ
«ԱՐՄՓՐՈՆԵՔՍՓՈ-2003»
ՑՈՒՑԱԿԱՆՈՒՄ**

Նախագահ Քոչարեան այցելելով «Արմփրոնեքսփո» ցուցահանդէս՝ յայտարարեց, թէ կը գործածէ բացառապէս հայրենական արտադրութեան աննդեղէն: Այս այս յայտարարութիւնը կատարեց, երբ զիջատնտեսութեան նախարար ընկ. Դաւիթ Լոբեանի ուղեկցութեամբ կը ծանօթանար ցուցահանդէսին ներկայացուած 64 ընկերութիւններու

արտադրութիւններուն:

Ըստ նախագահ Քոչարեանի, տարուէ տարի հայկական արտադրութիւններուն որակը կը բարձրանայ: Ան աւելցուց, որ օրէնսդրական դաշտի բարելաւումէն ետք պէտք է աշխատել լուծելու համար արտածումի հետ կապուած խնդիրները, մեր արտադրութեան որակը համապատասխան դարձնել Եւրոպական Միութեան չափանիշներուն եւ օգտագործել Առեւտուրի Համաշխարհային կազմակերպութեան կարելիութիւնները:

ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻՅՅԵԱԼ ԷՍՏՐՈՒԹԵԱՆ ՄԵՋ ՊԱՏՈՒԲԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԵՋ

Հայաստանի մշակույթի եւ երիտասարդութեան հարցերու նախարարութեան հրահրով 18-24 Հոկտեմբեր Հայաստան կը գտնուէր Արարական Միացեալ Էմիրութիւններու մշակույթի եւ տեղեկատուութեան նախարարութեան պատուիրակութիւնը: Վեց պաշտօնատարներէ բաղկացած պատուիրակութեան այցելութիւնը ճանաչողական էր: Անիկ կը նպատակադրէր ամրապնդել եւ երկուստեք զարգացնել մշակութային յարաբերութիւնները:

Պատուիրակութեան անդամները հանդիպած են Հայաստանի մշակույթի եւ երիտասարդութեան փոխ նախարար Կարէն Արիստակէսեանի, Հայաստանի արտաքին գործող փոխ նախարար Ռուբէն Շուգարեանի եւ Հայաստանի առեւտուրի եւ տնտեսական զարգացման փոխ նախարար Տիգրան Դաւթեանի հետ:

Անոնք նաեւ այցելած են Հայաստանի Գիտութիւններու ազգային ակադեմիայի արեւելագիտութեան հիմնարկ, Երեւանի Պետական համալսարանի արեւելագիտութեան բաժանունը, Հայաստանի պատմութեան պետական, Երուսաղէմի Քոչարի եւ Սերգէյ Փարաշանովի թանգարանները, Մարտիրոս Սարեանի տուն-պետական մանկական զբոսարան, Հայաստանի գեղագիտական դաստիարակութեան կեդրոն, Մատենադարան, Զուարթնոց, Գառնի եւ Գեղարդ:

ԼՈՆՏՈՆ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ԾՆՆՂԵԱՆ, 100ԱՐԵՎԵԼԻՆ ԴՈՒՐԻՆՈՒՄԸ ՏՕՐԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ

13 Հոկտեմբերին Լոնտոնի «Ռոյալ Փետիվոլ Էլի» համերգահասկին մէջ Լոնտոնի Ֆիլհարմոնիք նուագախումբի նուագակցութեամբ տեղի ունեցած է Արամ խաչատուրեանի ծննդեան 100ամակիւն նուիրուած տօնակա համերգ մը՝ ձորձ ֆեւրվարեանի ղեկավարութեամբ: Արամ խաչատուրեանի ստեղծագործութիւններէն հատուածներ կատարած են ջութակահարներ Սերգէյ խաչատուրեան, Ալեքսանտր Չիլիքեանի եւ Բրիտանիոյ մէջ Հայաստանի Ապրիլի Բրիտանիոյ մէջ Հայաստանի ղեկավարութեամբ: Արամ խաչատուրեանի ծննդեան 100ամակիւն եւ Հայաստանի անկախութեան 12ամակիւն նուիրուած այլ համերգ մը տեղի ունեցած էր 28 Սեպտեմբերին, Լոնտոնի «Սէյնթ Ճոն» համերգահասկին մէջ:

Արամ խաչատուրեանի ծննդեան 100ամակիւն եւ Հայաստանի անկախութեան 12ամակիւն նուիրուած այլ համերգ մը տեղի ունեցած էր 28 Սեպտեմբերին, Լոնտոնի «Սէյնթ Ճոն» համերգահասկին մէջ:

ԱՌՈՂՋԱՊԱՎԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԵԳՐՈՆՆԵՐ ԼՈՒՒՄԸ


Վերջերս Վանաձորի թիւ 5 համարու ժողովրդական մէջ տեղի ունեցաւ Լոնտոնի առողջապահական կրթական կեդրոնի հանդիսաւոր բացումը: Այս կեդրոնը ստեղծուած է Հայաստանի առողջապահութեան նախարարութեան, Լոնտոնի մարզպետարանի առողջապահութեան եւ ընկերային ապահովութեան վարչութեան եւ Միլուոքի միջազգային առողջապահական կեդրոնի միացեալ ջանքերով:

Այս կրթական կեդրոնը իր տեսակին մէջ միակն է Հայաստանի տարածքին: Ան կը նպատակադրէ մարզի առողջապահութեան ոլորտին համար պատրաստել որակեալ մարդու՝ առանձին ուշադրութիւն դարձնելով գիւղական շրջաններուն մէջ աշխատող բժիշկներուն կարիքներուն:

Կեդրոնի բացման արարողութեան ներկայ էին Լոնտոնի մարզպետ Հենրի Քոչինեան, Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Ճոն Օրտոնէյ, Միացեալ Նահանգներու Միջազգային զարգացման գործակալութեան Հայաստանի

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԸՆԹԱՍՏՈՒԹԻՒՆ

«ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆԻ» ՑՈՒՆ ԹԱՆԳԱՐԱՆ



Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի տաղաւարները ներկայացնող Սերգէյ Շահվերդեան եւ Դաւիթ Իշխանեան, որոնք «Ազգայն» խմբագրատունն այցելեցին եւ ունեցան հանդիպում մը խմբագրութեան հետ, անկախ «ՊիԷլ» մէջ տեղի ունեցած ցուցահանդէսին մասին փոխանցած իրենց տպաւորութիւններէն ու տեղեկութիւններէն (սոյն էջի առաջին ճակատի լուրը), տեղեկացուցին նաեւ Նիկոլ Դումանի մասին ստորեւ տրուած շահեկան իրադարձութեան մասին:

Շուրջ վեց ամիս առաջ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Ասկերանի շրջանին մէջ եւ ղէպի Գանձասար տանող ճամբուն վրայ, Հ. Յ. Դ. Արցախի ռուսաւորական միութիւնը՝ հովանաւորութեամբ, ֆինանսաւորուածով եւ օժանդակութեամբ Ստեփանակերտի «Ասպար» գրաստանի միութեան, կրցաւ յայտնաբերել հայագային-ազատագրական պայքարի եւ յեղափոխական շարժումի գործիչներէն Նիկոլ Դումանի ծննդավայրը, եւ անոր ծնողքին բնակարանը՝ ամբողջովին անվթար վիճակի մէջ:

Հ. Յ. Դ. Արցախի ռուսաւորական Միութեան նախաձեռնութեամբ կատարուած այս աշխատանքը կը հետապնդէ յստակ նպատակ, պատմութեան տրամադրած փաստերուն եւ փաստագրութեան հիման վրայ Արցախի սահմաններուն մէջ ձեռնարկելու Հ. Յ. Դաւիթեանի ֆետայիններու ծննդավայրերու կամ գերեզմաններուն յայտնաբերման:

Նշեալ ծրագրի գործադրութեան առաջին նուաճումը եղած է Նիկոլ Դումանի բնակարանի յայտնաբերումը:

Ըստ զիւղի բնակիչներուն, տունը փակ մնացած է տասնեակ տարիներ, որովհետեւ անոր տէրերը փոխադրուած են Թուսիան:

